ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

“Անասնակերի արտադրություն և արոտների բարելավում որպես ԿՈՎԻԴ-19 հետևանքների մեղմման միջոցառում”

Fodder production and pasture improvement as a COVID-19 response measure

Ծրագրի Արդյունքների Ներկայացում

Շեն ԲՀԿ գյուղատնտեսական ծրագրերի
համակարգող՝ Նվարդ Շահմուրադյան

Շ Հ Ն

Ծրագրի նպատակը

Առաջարկել արոտավայրերի և վարելահողերի բարելավման այնպիսի պիլոտային մոդել, որի ներդրումը հնարավորություն կտա վերականգնել նշված հողատեսքերի նպատակային նշանակությունը և բարձրացնել նրանց շահագործումից ստացվող եկամուտը: Ապահովել լրացուցիչ կերարտադրություն:

Թիրախ 1: *Վարելահողերի նպատակային նշանակության վերականգնում՝ կերային մշակաբույսերի արտադրության միջոցով*

Թիրախ 2: *Արոտավայրերի բարելավում հին և նոր տեխնոլոգիաների զուգակցության շնորհիվ*

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Տնտեսական արդյունքներ

- *Բարելավել 300 հա վարելահող և ավելացնել անասնակերի ծավալները*
- *Երկար տարիներ չօգտագործված վարելահողերը կրկին դարձնել օգտագործելի անասնապահությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների համար*
- *Արտադրել անասնակեր, որի ինքնարժեքը շատ ավելի ցածր կլինի, քան մյուս մարզերից գնված խոտը, որը հնարավորություն կտա դրամական միջոցների խնայողություն անել:*
- *Վարելահողերի նպատակային օգտագործումը վերականգնել՝ 1 հա հաշվով գոյացնել հավելյալ եկամուտ:*

Սոցիալական արդյունքներ

- *Սեզոնային աշխատանքի աշխատատեղերի ստեղծում՝ արոտների բարելավման ժամանակ:*
- *Կոոպերատիվների միջոցով նոր աշխատանքի հնարավորություն կստեղծվի՝ արոտները մաքրելու ժամանակ, որը վաղ գարնան և աշնան համար շատ կարևոր է այս մարզերի համար*

Էկոլոգիական արդյունքներ

- *Արոտավայրերում հանդիպող բուսատեսակները կունենան երկարաժամկետ գոյատևման նույնպիսի հնարավորություններ ու համապատասխան կենսամիջավայր, որոնք կապահովեն բնական աճը, բազմացումը և կպահպանվեն նաև ծրագրի ավարտից հետո:*
- *Դերագրաղացված արոտավայրերի բնական կենսամիջավայրի վերականգնում՝ տվյալ գոտիականությանը բնորոշ բուսատեսակների վերաճի համար ապահովելով բոլոր նախապայմանները:*
- *Վարելահողերի նպատակային նշանակության վերականգնում, բարելավելով հողի կառուցվածքային, որակական կազմը՝ ապահովելով ավելի բարձր արտադրողականություն*
- *Կենսաբազմազանության և ագրոկենսաբազմազանության պահպանում*

Ծրագրի շահառու բնակավարները

Գեղարքունիքի մարզ

Ծաղկաշեն,
Գանձակ,
Սարուխան,
Լանջաղբյուր,
Մադինա,
Վարդենիկ,
Արծվանիստ,
Կարճաղբյուր,
Լճավան,
Մաքենիս,
Լուսակունք,
Խաչաղբյուր

Շիրակի մարզ

Լոռու մարզ



Ամասիա խոշորացված համայնք

Գյուլագարակ խոշորացված համայնք

Շահառու ֆերմերային տնտեսությունների ընտրության չափորոշիչները

Հիմնական չափորոշիչներ	- Տնտեսություններ որոնք ունեն 1-3 հա (ոչ ավելի) մակերես ունեցող վարելահող - Վարելահողը 10 տարուց ավելի չի օգտագործվել որպես վարելահող - Տնտեսությունը ունի 2-3 ԽԷԿ - Ֆերմերը պատրաստ է 30% համաֆինանսավորում իրականացնել - Մասնակցի դասընթացներին և կիրառի ուսուցանված տեխնոլոգիան
Հավելյալ, արտոնություն տվող չափորոշիչներ	- Հողի սեփականատերը կին է - Բազմազավակ երիտասարդ ընտանիք՝ 3 և ավելի երեխաներ - Եթե ֆերմերը նաև մեխանիզատոր է - Ունի գյուղատնտեսական կրթություն - Ունի անասնաբուժական կրթություն - Անասնապահությամբ զբաղվող ֆերմերներ, որոնք հարկադրված տեղահանվել են Արցախից Հայաստան

Առաջարկվող միջոցառումների նորարարական մոտեցումը և առանձնահատկությունները

- Առաջարկվում է ներդնել համայնքների բարելավման գործողությունների այնպիսի մոդել, որը նվազագույն ծախսերով կապահովի մաքսիմալ արդյունք:

- Առաջավոր փորձի և առկա ռեսուրսների արդյունավետ համադրություն, որի շնորհիվ փոքր ֆերմերային տնտեսությունները կկարողանան ինքնուրույն վերականգնել և բարելավել սեփականաշնորհված կամ վարձակալված հողատարածքները:

- Առաջարկվող գործողությունները կապահովեն նաև համայնքում գործող «Արոտօգտագործողների կոոպերատիվների», համայնքային ռեսուրսի կարողությունների բարելավում և առաջարկվող ծառայությունների նոր որակ:

- Մոդելը հնարավոր է կրկնօրինակվել ՀՀ բոլոր մարզերում, հատկապես այնտեղ որտեղ կան քիչ թե շատ կայացած կոոպերատիվներ:

Առաջարկվող միջոցառումների նորարարական մոտեցումը և առանձնահատկությունները

Ֆրեզների կիրառությունը	Այս գործիքների կիրառությունը հնարավորություն է տալիս հողաշերտը փխրեցնել 6-8 սմ խորությամբ: • Ճիմը ճեղքել և ստեղծել փուխր շերտ, որը կլանում է տեղումներից գոյացած **խոնավությունը** և պահում իր մեջ: • Սերմերի ծլման համար **օդաթափանց** շերտ է ստեղծում, որը նպաստավոր է սերմերի համերաշխ ծլման համար: • Մակերեսային հողախառնումը հնարավորություն է տալիս հարաբերական հանգստի փուլում գտնվող տարբեր խոտաբույսերի **սերմերի ծլմանը**: • Միջին քարքարոտության հողերում չի ստեղծում ավելորդ խնդիրներ՝ քարհավաքի հետ կապված հավելյալ ծախսեր: • Ապահովում է ճմակալված վարելահողերի բարելավման համար **ագրոտեխնիկական միջոցառումների կրճատում և ժամանակի խնայողություն**: • Վարելահողերի պարագայում՝ ցանքից առաջ կանաչ պարարտացման պրոցես է ապահովում:

Հողաֆրեզի կիրառություն

Առաջարկվող միջոցառումների նորարարական մոտեցումը և առանձնահատկությունները

Ծաղկման խթանիչ	Ծաղկման խթանիչի կիրառությունը նպաստում է ծաղկման ակտիվացմանը, արդյունավետ **փոշոտման տոկոսի բարձրացմանը**: • Նպաստում է չծաղկած ծաղկի **նեկտարի առատ արտադրությանը**, որը գրավում է բոլոր միջատներին: • Նպաստում է **սերմերի լիարժեք հասունացմանը** և հավասարաչափ զարգացմանը: • Արդյունքում արագանում է արոտավայրերում ու վարելահողերում **խոտածածկի վերարտադրման** գործընթացը: Սերմերը համերաշխ հասունանում են և տարածվում: • **Էկոլոգիապես անվտանգ է** բոլոր միջատների համար, թույլատրվում է կիրառությունը օրգանական գյուղատնտեսության մեջ:

«Ակտիվ ֆլաուեր» պրեպարատը

Վարելահողերի նպատակային նշանակության վերականգնում՝ կերային մշակաբույսերի արտադրության միջոցով

Տերևային/ արտարմատային սնուցում:	• Սնուցման այս տարբերակի կիրառությունը հնարավորություն է տալիս շրջանցել հանքային պարարտանյութերի արմատային կիրառության արդյունքում առաջացող աղտոտման և օջախային կուտակման խնդիրներից: • Արտաարմատային սնուցումը բարձրացնում է միավոր մակերեսի վրա տրվող սննդատարրերի յուրացումը բույսերի կողմից: • Ծախսի նորման քիչ է: • Տեխնիկայի կիրառությամբ հնարավորություն է տալիս կարճ ժամկետում մեծ մակերեսներ պարարտացնել՝ ժամանակի և ռեսուրսի խնայողություն: • Սրսկիչների օգնությամբ հնարավոր է թեք լանջերի վրա տրվող պարարտանյութը հավասարաչափ բաշխել ամբողջ մակերեսի վրա:

Տերևային արտարմատային սնուցում

Բաղադրությունը՝N6 + P23 + K35 + 1 Mg + 8Ca + 0.27 Zn + B + S

Խոտախառնուրդ: Արոտավայրերի բարելավման համար

Մեր կողմից առաջարկվող և փորձարարական արոտներում կիրառված խառնուրդի կազմը՝

- 20% Շյուղախոտ կարմիր
- 15% Երեքնուկ սողացող
- 20% Շյուղախոտ եղեգնանման
- 25% Որոմ բազմամյա կամ Անգլիական ռայգրաս
- 20% Ոզնախոտ կծկավոր

Շյուղախոտ կարմիր

Երեքնուկ սողացող

Շյուղախոտ եղեգնանման

Որոմ բազմամյա

Ոզնախոտ կծկավոր

Վարելահողերում ցանքի համար առաջարկվել է Կորնգան

Հատուկ ուշադրություն է դարձվել

- Բազմահար կորնգան
- Սերմի ծլունակություն 93-95% և ավելի
- Սերմի մաքրություն 90% և ավելի
- Ցանքի նորմա 130կգ/հա

Ծրագրի ընթացքի նկարագրությունը և արդյունքները



Վարելահողերի և արոտավայրերի հողի քիմիական կազմի որոշում

Գեղարքունիքի մարզում արդյունքները

Համայնք	Բնակավայր	Շահառուներ	Բարելավված վարելահողեր	Բարելավված արոտավայրեր
Գավառ	Ծաղկաշեն	38	34.47	20
	Գանձակ	9	7.12	
	Սարուխան	16	12.4	
	Լանջաղբյուր	40	27.2	20
Մարտունի	Վարդենիկ	10	10	
	Արծվանիստ	30	31.29	
Վարդենիս	Կարճաղբյուր	12	13.30	
	Մաքենիս	38	33.75	20
	Լճավան	25	26.71	
	Լուսակունք	11	11.8	
	Խաչաղբյուր	71	57.75	
Ընդամենը		**300**	**265.79**	**60**

Լոռու մարզում արդյունքները

- Ընտրվել է **15** տնտեսություն
- Բարելավել է **18.67** վարելահող
- Բարելավել է **20 ha** արոտավայր



Շիրակի մարզում արդյունքները

- Ընտրվել է **11** տնտեսություն
- Բարելավել է **15.96 հա** վարելահող
- Բարելավել է **20 հա** արոտավայր

Սերմի, պարարտանյութերի և բուժանյութերի բաշխում 326 տնտեսության



Ծրագրի շրջանակում իրականացվել են մի շարք ուսուցումներ

N	Data Ամսաթիվ	Type of training Ուսուցման տեսակը	The number of training Ուսուցման քանակը	Training location Ուսուցման վայրը	Heading Վերնագիր	NB of participants Մասնակիցների թիվը
1	09.02-24,03.2022	Theoretic Տեսական	**13**	Lori region, Gegharkunik region & Shirak region Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ և Շիրակի մարզ	Presentation of guideline for pasture improvement Արոտների բարելավման դաշտային ուղեցույցի ներկայացում,	**410**
2	16.02-29.03.2022	Theoretic Տեսական	**13**	Lori region, Gegharkunik region & Shirak region Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ և Շիրակի մարզ	Restoration of the purpose of arable lands thru the production of fodder crops Վարելահողերի նպատակային նշանակության վերականգնում՝ կերային մշակաբույսերի արտադրության միջոցով	**511**
3	15.07-27.07.2022	Theoretic Տեսական	**13**	Lori region, Gegharkunik region & Shirak region Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ և Շիրակի մարզ	Root fertilizers and new technologies, regarding their profitability and efficiency Արտարմատային պարարտանյութերի և նոր տեխնոլոգիաների, դրանց եկամտաբերության և արդյունավետության վերաբերյալ	**304**
4	26.08-05.09.2022	Theoretic Տեսական	**10**	Lori region, Gegharkunik region & Shirak region Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ և Շիրակի մարզ	Improvement measures implemented for the restoration of pastures and hay meadows Արոտավայրերի և խոտհարքների վերականգնման համար իրականացվող բարելավման միջոցառումներ	**262**
5	28.09-06.10.2022	Theoretic Տեսական	**8**	Lori region, Gegharkunik region & Shirak region Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ և Շիրակի մարզ	Economically efficient fodder production, cost and profit calculation Տնտեսապես արդյունավետ անասնակերի արտադրություն, ծախսերի և շահույթի հաշվարկ	**160**
Total Ընդհամենը			**57**			**1647**

FACE MASK

Իրականացվել են փոխայցելություններ և գործնական պրակտիկ խորհրդատվություն յուրաքանչյուր շահառու տնտեսությունում

Առաջարկություններ

- Մշակել և ընդունել այնպիսի բարեփոխման ծրագիր, որը հնարավորություն կտա ՀՀ բոլոր մարզերի ՏԻՄ-ի միջոցով ներդնել «Խոշորացված համայնքների արոտավայրերի բարելավման տարեկան ծրագիր»: Յուրաքանչյուր խոշորացված համայնք իր եռամյա ծրագրի մեջ ներառի արոտների նվազագույնը 20 հա/տարեկան արոտավայրի բարելավում յուրաքանչյուր բնակավայրի/գյուղի համար:

- ՀՀ այլ մարզերում և շահառու մարզերում ներդնել փորձարկված և առաջարկվող տեխնոլոգիայի ամբողջական մոդելը, կամ առանձին գործառույթները:

- Սուբսիդավորել տեղական արժեքավոր կերային մշակաբույսերի սերմարտադրությունը: Գիտահետազոտական կենտրոնների ու կոոպերատիվների համագործակցության՝ համատեղ աշխատանքի մոդելի տեսքով:

- Բարձրացնել պետական աջակցությամբ ներկրվող կերային մշակաբույսերի սերմերի համար սահմանված չափորոշիչների նվազագույնը շեմը: Սուբսիդավորել միայն բարձր ծլունակությամբ, մաքրասորտ և հավաստագրված սերմերի ներկրումը:

Առաջարկություններ

- Հացահատիկի ցանքերի ծախսերի մասնակի փոխհատուցման աջակցության ծրագրում ներառել նաև բարձրարժեք կերային մշակաբույսերի (բազմամյա բակլազգիների, կերի ճակնդեղ, սիլոսի եգիպտացորեն, ռապս) ցանքերի սուբսիդավորման բաղադրիչ:

- Սուբսիդավորել բացառապես կոմպլեքս/համակցված պարարտանյութերի (NPK) ներկրումը, դրանով անուղղակի ուղղորդելով ֆերմերային տնտեսություններին հրաժարվել միայն ազոտական պարարտանյութերի կիրառությունից:

- Խթանել արտաարմատային պարարտացման մշակույթի ներդրմանը՝ արոտավայրերի, խոտհարքերի բարելավման ու կերային մշակաբույսերի ցանքերում: Պարարտացման այս մեթոդը ավելի քիչ վնասակար է շրջակա միջավայրի՝ հողային ռեսուրսի, գրունտային ջրերի աղտոտման տեսանկյունից:

- Ֆերմերներին իրազեկել ծաղկման խթանիչների (բուսական ծագման) նպատակային նշանակության ու կիրառության վերաբերյալ՝ խոտհարքերի, վարելահողերի ու բաց դաշտի պայմաններում կիրառելու համար:

Առաջարկություններ

- Ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերման աջակցություն՝ հողաֆրեզներ, խոտաղացներ, սրսկիչներ, քարհավաքի տեխնիկա:

- Քարքարոտ վարելահողերի նպատակային նշանակության վերականգնման համար աջակցել կոոպերատիվների կողմից քարհավաքի ծառայություն մատուցման գործառույթի զարգացմանը՝ սուբսիդավորել մինչև 3 հա վարելահող ունեցող տնտեսությունների 1 հա քարհավաքի ծախսի մի մասը:

- Արոտների խնդրի հրատապությունից ելնելով առաջիկա երկու տարիների ընթացքում սուբիսդավորել հեռագնա արոտների ճանապարհների բարեկարգման փաթեթ՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի ու Վարոց ձորի համար:

Շնորհակալություն

Հողը բոլոր նյութական բարիքների սկզբնաղբյուրն է, ամենաթանկ կապիտալը: